Միւս կողմից Աստղիկի Երզնկացի կոչումը ևս անհիմն չէ։ Ցայտնի է որ Աշտիշատում Վահագնի և Աստղիկի մեհեանին կից էր և Անահտինը, որով կարծես մի մերձաւոր կապ և միութիւն կայ այս երկի մէջ։ Եւ քանի որ Անահտի մի նշանաւոր մեհեանն ևս գտնւում էր Երիզա—Երզնկա աւանում, ուստի այս դէպքում Անահիտը բռնել է Աստղիկի տեղը։

Անհասկանալի է միայն մնում թէ ինչպէս Աստղիկը մի կողմից Զոլանց տան թագաւորն է, բայց միւս կողմից թշնամի։ Այստեղ իմ կարծիքով երկու աւանդութիւն և հաւատալիք պահպանուած են և ամփոփուած Զոլանց վէպում։ Քաջանց տունը աստուածային ծագումն ունի, այսպէս էլ Զոլանցը, որ երևում է թէ Քաջանց հետ ազգակցութեամբ կապուելով և թէ մանաւանդ ջրային ծագմամբ, ինչպէս որ Վահագնինն է. թերևս այստեղ Աստղիկն իբրև աստղ երկինքն է, որ նոյնպէս Վահագնի ծնունդն երկնում էր։ Եւ որովհետև Աստղիկ Երզնկացին սպանւում է Պատիկ Մհէրից. իսկ սա ինչպէս ցոյց եմ տուել Միհր-արեգակն է, ուստի այստեղ Աստղիկը գիշերուայ, խաւարի, ներկայացուցիչն է հանդիսանում։ Այս վերջին աւանդութեամբ ուրեմն պահուած է լուսոյ և խաւարի յաւիտենական կռիւը։

Աւելի զարմանալին այն է սակայն, թէ ինչպէս Աստղիկ գիցուհին Զոլանց տան վէպում դարձել է գիւցազն, արագան անձն։ Այս կարող էր բղխել ճիշտ վերջին հանգամանքից. եթէ Պատիկ-Մհէրը, ուրեմն Միհր-արեգակը տղամարդ է, նորա հակառակորդ և թշնամին նոյնպէս պիտի լինի. կամ այստեղ չէ՞ ազդել հայ ժողովրդի հաւատալիքը թէ լուսինը, ուրեմն այս դէպքում Աստղիկը, եղբայր է. վերջապէս աստղները կարող են երկու սեռի լինել, այսպէս Լէյլին ու Մէջնունը, որ Համբարձման գիշերն իրար «ողջունում են»։ Հայոց հէքեաթներից առած Ղ. Աղայեանի Արեգնազանը աղջիկ լինելով՝ վերջը տղայ է դառնում։ Առհասարակ հայ ժողովրդի հէքեաթներում կան էլ աւելի շփոթ բաներ. օրինակ մի զրոյցում կայ Ուլի քաղաք [1], որ մի հէքեաթում կոչւում է Ուլի (Ուլի՞ս, Ուվի՞—Ովէ=Յովան) բազրկան [2]—ճիշտ Յովհաննէս վաճառականի և Մարիամ թագուհու անցքը. և մենք տեսանք նոյնպէս, որ Կումրի քաղաքը դարձել էր Ղումրիկ թագաւոր։

Աւելի ևս տարօրինակ է և մեր Զոլանց տան վէպում երևացող Զմշկիկ-Զմուցկիկ սուլթանը [3]։ Անտարակոյս սա Բիւզանդիոյ

---

1. Լիմենան Աղդաղր. ժողովածու Բ. § 6 «Բլուել Աղջիկ» էջ (165—182) 177։

2. Անդ. Դ. § 44 «Գաածուրիկ փարէն». էջ (89—92) 90։

3. № 2. (էջ 37. 46. 47. 51. 52) եւ № 7 (էջ 44—45. 54—56